

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 14.13/[141633]-13

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ԺԱՄԸ
11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ԿԱՆԱՆՑ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Հ. Նաղդայան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Կ. Մինասյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Ա. Սամուելյան	ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ
Ռ. Ալավերդյան	ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Ջ. Բաղդասարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Լ. Մուրադյան	ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ
Է. Հայրիյան	ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով պալատի դատավոր
Ա. Խուրդյան	«Հրապարակում» հեռուստատեսային ծրագրի ղեկավար
Կ. Սուջյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բաժնի պետ
Գ. Սողոմոնյան	Երևանի քաղաքապետարանի կրթության վարչության պետ
Վ. Գասպարյան	ՀՀ Շիրակի մարզի Ախուրիկ համայնքի ղեկավար
Ա. Թովուզյան	Հայաստանի կանանց հանրապետական խորհրդի նախագահ
Ջ. Հասրաթյան	«Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Ռ. Ծառուկյան	«Գ. Կ. Ծառուկյան» ՄՊԸ-ի տնօրեն
Գ. Արմաղանովա	Առողջապահության աշխատողների արհմիությունների

հանրապետական կոմիտեի նախագահ

Ա. Մնացականյան	ՀՕՄ, ծրագրի ղեկավար
Ծ. Հարությունյան	ԵԱՀԿ-ի հայաստանյան գրասենյակի գենդերային ծրագրերի պատասխանատու
Գ. Հայրապետյան	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ (խորհրդի քարտուղար)

Հրավիրվածներ՝

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Հ. Բերբերյան	ՀՀ վարչապետի օգնական
Հ. Ասրենս	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի տնօրեն
Ա. Այվազով	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, ծրագրի ղեկավար

1. ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքները՝

- 1.1. Կանանց քաղաքական մասնակցության և ընդգրկվածության հիմնական ցուցանիշները (համեմատական վերլուծություն նախորդ ընտրությունների հետ)
- 1.2. Կանանց կառավարչական հմտությունների բարելավման առկա խնդիրների մասին

(Ջ. Հասարթյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 1-ին հարցը զեկուցեց «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Ջ. Հասարթյանը և նշեց, որ 2012 թվականի ընտրությունների արդյունքները բնորոշ էին նրանով, որ մի շարք հիմնադրամներ օժանդակելով ՀԿ-ներին ապահովեցին ընտրական գործընթացներում կանանց առավել ակտիվ մասնակցությունը: Այդ կապակցությամբ նա առանձնացրեց հետևյալ ծրագրերը՝

1) «Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգում կանանց արդյունավետ մասնակցության կարողությունների հզորացում», որն իրականացվել է ՄԱԿ-ի

ծրագրի համագործակցության արդյունքում՝ ԵՄ-ի ֆինանսավորմամբ: Այս ծրագրին մասնակցել է 3 կազմակերպություն: Նախապատրաստական փուլում անց են կացվել 3 փուլից բաղկացած աշխատանքներ: ՀՀ 9 մարզում, բացառությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի, կազմակերպվել են 12-օրյա սեմինարներ, որոնց մասնակցել է 325 կին: Հետագայում, սեմինարներին մասնակցած կանանցից յուրաքանչյուր 2-րդը մասնակցել է ընտրական գործընթացին և առաջադրել իր թեկնածությունը: Արդյունքում թեկնածություն առաջադրածների 64.7 տոկոսն ընտրվել են համայնքների ավագանիներ: Ընդհանուր գնահատականներով, անցյալ ընտրությունների համեմատ, կանանց ներգրավվածության տոկոսային գնահատականը հետևյալն է՝

- ա. ՀՀ Սյունիքի մարզ՝ 17.4 տոկոս,
- բ. ՀՀ Լոռու մարզ՝ 12.5 տոկոս,
- գ. ՀՀ Տավուշի մարզ՝ 9.3 տոկոս,
- դ. ՀՀ Արմավիրի մարզ՝ 8.7 տոկոս:

Ընդհանուր առմամբ բոլոր մարզպետարանները ՀԿ-ի հետ համատեղ ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ընտրական գործընթացին և արդյունքները ցույց տվեցին, որ մինչ ընտրական գործընթացը չի իրականացվել բավարար աշխատանք: Դրա հետևանքով ընտրված կանանց տոկոսային հարաբերակցությունը հետևյալն է՝

- ա. ՀՀ Արագածոտնի մարզ՝ 4.7 տոկոս,
- բ. ՀՀ Վայոց ձորի մարզ՝ 4.1 տոկոս,
- գ. ՀՀ Արարատաի մարզ՝ 6 տոկոս,
- դ. ՀՀ Շիրակի և Կոտայքի մարզեր՝ 7 տոկոս:

Այսինքն, եթե քաղաքային, մարզային կառույցները և քաղաքական կուսակցություններն ու ՀԿ-ներն առավել ակտիվ նախապատրաստվեին ընտրական գործընթացին, ապա տոկոսային ցուցանիշները բարձր կլինեին: Ինչ վերաբերում է համայնքային ղեկավարների շրջանում կանանց ներգրավվածությանը, ապա ցուցանիշները բացասական են: Այս ընտրությունների արդյունքներում առաջադրված 43 կանանցից ընտրվել է ընդամենը 10-ը (կազմում է 1.6 տոկոս՝ ՄԱԿ-ի կոնվենցիայով երկրի կողմից ստանձնած պարտավորության 10 տոկոսի փոխարեն): Այդ կապակցությամբ նա նկատեց, որ քաղաքական կուսակցություններից միայն ՀՀԿ-ի կանանց խորհուրդն է, որ իրականացրել է նախընտրական աշխատանքներ: Ընդ որում, կազմակերպված սեմինարների ընթացքում քաղաքական կուսակցությունների հիմնական շահագրգռվածությունը ՀՀ ԱԺ և նախագահական ընտրություններին մասնակցությունն էր, այլ ոչ ՏԻՄ ընտրություններին:

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Ջ. Հասարայանի հաղորդումը՝ ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքների մասին:

2. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն ներկայացվելիք 5-րդ և 6-րդ պարբերական զեկույցների նախապատրաստման ընթացքի և առկա խնդիրների մասին

(Կ. Սուջան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 2-րդ հարցը զեկույցեց ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բաժնի պետ Կ. Սուջանը և նշեց, որ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն ներկայացվելիք 5-րդ և 6-րդ պարբերական զեկույցների նախապատրաստման նպատակով ՀՀ վարչապետի համապատասխան որոշմամբ ստեղծվել է կոնկրետ միջգերատեսչական հանձնաժողով:

2012 թվականի ընթացքում տեղի են ունեցել հանձնաժողովի մի քանի նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են ՀՀ զեկույցի պատրաստման մանրամասները: Ներկայումս նախապատրաստվել է ՀՀ պարբերական զեկույցի նախագիծը: Նախատեսվում է, որ մյուս տարի այն կքննարկվի նաև շահագրգիռ հասարակական կազմակերպությունների հետ, ինչից հետո կներկայացվի Կառավարության հաստատմանը:

Այնուհետև ուշադրություն հրավիրվեց Կոնվենցիայի հանձնարարականների համաձայն ստանձնած հետևյալ հարցերի վրա

1) «Ընտանեկան բռնության մասին» օրենքի նախագիծ:

Նախագիծն արդեն մի քանի տարի է մշակման փուլում է, ինչի մասին տեղեկացվում է միջազգային մոնիտորինգային մարմիններին: Խնդիրն ի վերջո պետք է հանգուցալուծվի՝ եթե կան օրենքի նախագծի հետ կապված խոչընդոտներ դրանք պետք է վերացվեն, կամ, օրենքի ընդունման աննպատակահարմարության դեպքում, բացատրվի թե ինչու այդ օրենքը չի ընդունվում:

Այդ կապակցությամբ առաջարկեց քննարկել և կայացնել որոշում՝ օրենքի ընդունման նպատակահարմարության կամ ոչ նպատակահարմարության մասին և դրա մասին ՄԱԿ-ին ներկայացնել հիմնավորված պատճառաբանություն: Ընդ որում, օրենքի նախագիծը ենթադրում է նաև ֆինանսական պարտավորություններ:

2) գենդերային հավասարության ազգային մեխանիզմի ստեղծում (մանդատի մշակում, մարդկային ռեսուրսներ և ֆինանսական ռեսուրսներ), այս հանձնառուական ընդգրկված է Պեկինյան պլատֆորմում: Այսինքն, անհրաժեշտ է ստեղծել համակարգող օղակ, որը կկարողանա ոչ միայն մշակել կանանց հանդեպ իրականացվող քաղաքականությունը, այլ նաև կիրականացնի մշտադիտարկում: Այդ ուղղությամբ առաջին քայլն իրականացվել է. ՀՀ վարչապետին կից կանանց խորհուրդի աշխատակարգում կատարվել է համապատասխան փոփոխություն: Դրա հիման վրա պետք է կատարել հաջորդ քայլը՝ ուսումնասիրել եվրոպական առաջատար փորձը, ինչի հիման վրա և, ՀՀ առաջնայնություններից ելնելով կմշակվի ազգային մեխանիզմը:

«Համալսարանական կրթությամբ կանանց ստոցիացիա» ՀԿ-ի նախագահ Ջ. Հասրայանն առաջարկեց՝

1) արագացնել «Գենդերային հավասարության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերջնական ընդունման (ՀՀ ԱԺ-ում ընդունվել է 1-ին ընթերցմամբ) գործընթացը.

2) արագացնել կանանց և տղամարդկանց ամուսնության թույլատրելի տարիքի վերաբերյալ օրենսդրական փոփոխության նախագծի վերջնական ընդունման գործընթացը.

3) գենդերային հավասարության ազգային մեխանիզմների գծով ստեղծել աշխատակազմ, որի կողմից կիրականացվի մշտադիտարկում.

4) Ընտրական օրենսգրքում առկա խտրականությունը վերացնելու նպատակով կատարել համապատասխան փոփոխություններ, ըստ որի՝

ա. կվերացվի 6-րդ համարից հետո յուրաքանչյուր հնգյակում մեկ այլ սեռի ներկայացուցչի պահանջը, որը դիտարկվում է որպես խտրականություն՝ կանանց նկատմամբ.

բ. կին թեկնածուի կողմից մանդատից հրաժարվելու դեպքում նրան կհաջորդի նույն սեռի մեկ այլ թեկնածու:

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ Գ. Հայրապետյանը նշեց, որ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համատեղ 2012 թվականին տրամադրվել է համապատասխան աջակցություն՝ «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ նոր օենքի մշակման գործընթացում: Արդյունքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ՀՀ կառավարություն է ներկայացվել վերջնական տարբերակ:

Անդրադառնալով գենդերային հավասարության ազգային մեխանիզմների խնդրին՝ նշեց, որ դեռևս 2 տարի առաջ (հաշվի առնելով նաև միջազգային փորձը) մշակվել է մեխանիզմի նախնական տարբերակ, որը կարելի է քննարկել և արդիականացնել:

Հայաստանի կանանց հանրապետական խորհրդի նախագահ Ա. Թովուզյանն առաջարկեց որպեսզի Ընտրական օրենսգրքի վերաբերյալ ներկայացվելիք առաջարկներում ներառվի նաև վերջնական ընտրական ցուցակներում կանանց 20 տոկոս ընդգրկվածության հարցը:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն առաջարկեց որպեսզի օրակարգի հարցի շուրջ բարձրացված հարցերը ներկայացվեն ՀՀ ԱԺ-ի պատգամավոր Հ. Նաղդալյանին՝ ՀՀ ԱԺ-ում դրանք քննարկման առարկա դարձնելու համար:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բաժնի պետ Կ. Մուջանի հաղորդումը՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն ներկայացվելիք 5-րդ և 6-րդ պարբերական զեկույցների նախապատրաստման ընթացքի և առկա խնդիրների մասին.

2) առաջարկել «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Ջ. Հասրաթյանին և Հայաստանի կանանց հանրապետական խորհրդի նախագահ Ա. Թովուզյանին՝ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկները ներկայացնել ՀՀ ԱԺ պատգամավոր Հ. Նաղդալյանին՝ ՀՀ ԱԺ-ում դրանք քննարկման առարկա դարձնելու համար:

3. Գենդերային հավասարության ազգային մեխանիզմի կայացման հիմնահարցեր

3.1. ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի կարողությունների հզորացումը ԵԽ-ի հետ համագործակցության միջոցով

(Կ. Մուջան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 3-րդ հարցը զեկույցեց ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բաժնի պետ Կ. Մուջանը և նշեց, որ ըստ էության հարցը քննարկվեց օրակարգի 2-րդ հարցի հետ մեկտեղ: Այդ կապակցությամբ նա առաջարկեց որպեսզի հետագայում ծավալվի առավել սերտ համագործակցություն միջազգային կառույցների, մասնավորապես, ՄԱԿ-ի, ԵՄ-ի և ԵԽ-ի հետ:

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ Գ. Հայրապետյանն առաջարկեց հատուկ ուշադրություն դարձնել մի

խնդրի, որը վերաբերում է սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների թվի և սեռերի հարաբերակցությանը: Այդ կապակցությամբ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ կատարվել է վիճակագրական տվյալների հավաքագրում, որը միակն է տարածաշրջանում: Առկա խնդիրը ժողովրդագրական տվյալների վրա կարող է ունենալ բացասական ազդեցություն և տվյալ պարագայում հարցը կտեղափոխվի ազգային անվտանգության ոլորտ: Ընդ որում, տվյալ խնդրի մասով Հայաստանն աշխարհում զբաղեցնում է 2-րդ տեղը՝ Չինաստանից հետո:

«Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Ջ. Հասրաթյանը նշեց, որ մեկ տարի առաջ ազգային մեխանիզմի վերաբերյալ ներկայացվել է բավականին ծավալուն փաստաթուղթ: Դրանից բացի՝ ազգային մեխանիզմի հետ մեկտեղ պետք է ընդգրկվեն ինստիտուցիոնալ մեխանիզմներ: ՀՀ բոլոր մարզպետարաններում ստեղծվել են հանձնաժողովներ, որոնք ղեկավարում են մարզպետների համապատասխան տեղակալները, սակայն քաղաքային համայնքներում դեռևս բացակայում են նմանօրինակ կառույցներ: Այդ կապակցությամբ նա առաջարկեց ամրագրել հետևյալը՝

- 1) ՀՀ վարչապետին կից կանանց խորհուրդը դիտարկել որպես գենդերային հավասարության ազգային մեխանիզմ.
- 2) ՀՀ մարզպետարաններում ստեղծված և գործող հանձնաժողովները դիտարկել որպես ինստիտուցիոնալ մեխանիզմներ, այդ թվում՝ ստեղծելով նաև քաղաքային ինստիտուցիոնալ մեխանիզմներ:
- 3) ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ ձևավորել աշխատակազմ (բաղկացած 5 անձից), որը կիրականացնի մշտադիտարկում և կներկայացնի վերլուծության արդյունքները:

Անդրադառնալով արհեստական ընդհատումների թվի և սեռերի հարաբերակցության խնդրին՝ նա առաջարկեց քննարկել ծնելիության (անկախ սեռից) մակարդակի բարձրացման խթանման հարցը: Ընդ որում, խնդիրը դիտարկել ըստ առանձին դեպքերի, տարածքների և իրականացնել ոչ թե միասնական ծրագիր, այլ ըստ առանձնահատկությունների:

Հայաստանի կանանց հանրապետական խորհրդի նախագահ Ա. Թովուզյանն առաջարկեց ձևավորել 3-5 անձից բաղկացած գենդերային հավասարության ազգային մեխանիզմի աշխատակազմ՝ կատարելով համապատասխան կանոնադրական փոփոխություններ:

Անդրադառնալով արհեստական ընդհատումների թվի և սեռերի հարաբերակցության խնդրին՝ նա առաջարկեց հարցը դարձնել առանձին քննարկման առարկա:

ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միր-զախանյանն առաջարկեց որպեսզի ևս մեկ անգամ ուսումնասիրվի միջազգային փորձը և դրա հիման վրա մշակել գենդերային հավասարության ազգային մեխանիզմի վերաբերյալ որոշումները:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանին՝ խորհրդակցելով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչների հետ՝ ներկայացնել գենդերային հավասարության ազգային մեխանիզմի աշխատակազմ ստեղծելու մասին համապատասխան որոշման նախագիծ:

2) արհեստական ընդհատումների թվի և սեռերի հարաբերակցության հարցը դարձնել առանձին քննարկման առարկա:

- 3.2. Գենդերային հավասարության ազգային մեխանիզմի վերաբերյալ միջազգային պահանջներին համապատասխան Կանանց խորհրդի ձևափոխման հիմնախնդիրների մասին

(Հ. Ասրենս, Տ. Սարգսյան)

Օրակարգի 3.2-րդ կետի կապակցությամբ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի տնօրեն Հ. Ասրենսը ներկայացրեց ծրագրի հետևյալ հիմնական ուղղությունները՝

1) կրթական համակարգում գենդերային հավասարությունը՝ կրթական բոլոր մակարդակներում ուսումնամեթոդական նյութերի մշակման և կիրառման միջոցով՝ համագործակցելով ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ:

2) գենդերային տարածքային և տեղական ուղղությունների ամրապնդումը՝ գենդերային հարցերով մարզային հանձնաժողովների կարողությունների հզորացման միջոցով՝ համագործակցելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ:

3) հասարակության մեջ կանանց և աղջիկների դերի և արժևորման հանրային ընկալման փոփոխությունը՝ համագործակցելով հեռուստաընկերությունների հետ:

4) գենդերային հավասարության և կանանց նկատմամբ խտրականության նվազեցումը՝ ամրապնդելով տարածքային ՀԿ-ների կարողությունները.

5) սոցիալական աշխատողների գենդերային կարողությունների ամրապնդումն ինտեգրված սոցիալական ծառայությունների բարեփոխումների ներքո՝ համագործակցելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ.

6) ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի գործառնության և տեխնիկական կարողությունների զարգացումը՝ նպատակ հետապնդելով այն ձևափոխելու գենդերային հավասարության ազգային մեխանիզմի:

ՄԱԿ-ի գործողությունների պեկինյան պլատֆորմում նշված է, որ ազգային մեխանիզմի հիմնական նպատակը գենդերային հավասարությանն աջակցելն է՝ կառավարման մակարդակների ամբողջական ընդգրկվածությամբ և քաղաքականության բոլոր ոլորտներում: Ազգային մեխանիզմը պետք է իրականացնի քաղաքականության վերլուծություն, շահերի պաշտպանություն, ենթակառուցվածքների համակարգման, մշտադիտարկման և տվյալների հավաքագրման գործառնություններ: ՄԱԿ-ի գործողությունների պեկինյան պլատֆորմում թվարկված են նաև ազգային մեխանիզմի արդյունավետ գործունեության համար հետևյալ անհրաժեշտ պայմանները՝

1) հանրային կառավարման համակարգում հնարավորինս բարձր դիրքում տեղակայումը.

2) ինստիտուցիոնալ մեխանիզմների կամ գործողությունների առկայությունը, որը կխթանի ապակենտրոնացված պլանավորումը գործողությունների իրականացումն ու մշտադիտարկումը՝ նպատակ հետապնդելով ներգրավել ՀԿ-ներին և համայնքային կազմակերպություններին.

3) անհրաժեշտ մարդկային և բյուջետային ռեսուրսների առկայությունը:

Ազգային մեխանիզմի կառավարման համակարգում տեղակայումը և կազմակերպական կառուցվածքն արտացոլում են դրանց մանդատի նկատմամբ կարևորությունը: Դա նաև կարևոր է գենդերային հատուկ խնդիրների նկատմամբ հանրային կարծիքի մոբիլիզացման տեսանկյունից:

Ազգային մեխանիզմի տեղն ու դերակատարությունը մեծամասամբ պայմանավորված է նրա բյուջեով և կառուցվածքով: Դրա կազմավորման իրավական կարգավորումը նկարագրում են վերջինիս մանդատն ու լիազորությունները, որոնք կարող են ներառել կամ չներառել սանկցիաների կիրառման լիազորություն, գենդերային դիսկրիմինացիայի կամ կանանց իրավունքների ոտնահարման դեպքերում: Ընդհանուր առմամբ ազգային

մեխանիզմի լիազորությունները բխում են համապատասխան սահմանադրություններից, գենդերային հավասարության օրենսդրություններից, նախագահների, պառլամենտների կամ վարչապետների որոշումներից, որոնք վերաբերում են գենդերային հավասարությանը: Ներկայումս առկա է ազգային մեխանիզմի բավականին մեծ բազմազանություն, որի պարագայում դրանք ունեն (որոշ դեպքերում) նախարարության կարգավիճակ կամ այլ կոմիտեներ և հանձնաժողովներ: Ինչ վերաբերում է Հայաստանի օրինակին, ապա նշեց, որ ՀՀ վարչապետին կից կանանց խորհուրդը հնարավոր է ներկայացնել որպես նոր ձևավորվող ազգային մեխանիզմ: Այդ նպատակով առկա է միջազգային փորձի բավականաչափ լայն շրջանակ և առաջարկվող տարբերակը պետք համահունչ լինի հայաստանյան համատեքստին: Այնուհետև նա հայտնեց ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությունը՝ համապատասխան քաղաքական այլընտրանքների վերլուծությունների հարցում:

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի տնօրեն Հ. Աարենսի զեկուցումը՝ գենդերային հավասարության ազգային մեխանիզմի վերաբերյալ միջազգային պահանջներին համապատասխան Կանանց խորհրդի ձևափոխման հիմնախնդիրների մասին:

4. «Լավագույն համայնքապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ» և «Լավագույն կին-գործարար» ՀՀ վարչապետի 2013 թվականի մրցանակաբաշխությունների հարցերի մասին

4.1. 2012 թվականի մրցանակաբաշխությունների հաշվետվության ներկայացում, խնդիրների վերհանում

(Կ. Մինասյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 4.1-ին հարցի կապակցությամբ ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանը տեղեկացրեց, որ «Լավագույն կին-գործարար» մրցանակի համար ընտրվեց 14 կին-գործարար և ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից ցուցաբերվեց համապատասխան աջակցություն, այդ թվում՝ 2-ին նաև ֆինանսական աջակցություն (պետական երաշխիքի տեսքով): Այնուհետև մասնակցելով դասընթացներին՝ որոշներն ընդգրկվել են Եվրոպական ձեռներեցության ցանցում:

Այդ կապակցությամբ առաջարկեց՝

1) 2013 թվականին շարունակել նույն մրցանակաբաշխությունը.

2) մրցանակաբաշխության մասին տեղեկույթը հրապարակել 2013 թվականի հունվար ամսին, իսկ արդյունքներն ամփոփել ապրիլ ամսին:

4.2. 2013 թվականի մրցանակաբաշխությունների կազմակերպման վերաբերյալ առաջարկությունների քննարկում

(Ջ.Հասարթյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 4.2-րդ հարցի կապակցությամբ «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Ջ. Հասարթյանն առաջարկեց 2013 թվականին ևս կազմակերպել ու անցկացնել մրցանակաբաշխություն՝ ավելացնելով նաև «Լավագույն կին համայնքի ղեկավար» մրցանակը:

«Հրապարակում» հեռուստատեսային ծրագրի ղեկավար Ա. Խուրդյանն առաջարկեց մրցանակաբաշխության գործընթացի շրջանակներում լրագրողների համար սահմանել «Լավագույն հեռուստահաղորդում՝ գենդերային հիմնահարցերի լուսաբանման շուրջ» մրցանակ, որը կենթադրի նաև դրամական պարգև:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հավանություն տալ ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանի, «Հրապարակում» հեռուստատեսային ծրագրի ղեկավար Ա. Խուրդյանի և «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Ջ. Հասարթյանի ներկայացրած առաջարկներին և 2013 թվականին կազմակերպել «Լավագույն համայնքապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ», «Լավագույն կին-գործարար», «Լավագույն կին համայնքի ղեկավար» և «Լավագույն հեռուստահաղորդում՝ գենդերային հիմնահարցերի լուսաբանման շուրջ» ՀՀ վարչապետի մրցանակաբաշխություններ:

5. Այլ հարցեր

5.1. Գենդերային ուսուցման մեթոդական հարցեր

(Ա. Թովուզյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 5.1-ին հարցը գեկուցեց Հայաստանի կանանց հանրապետական խորհրդի նախագահ Ա. Թովուզյանը և առաջարկեց՝

1) փոփոխել գենդերային դասընթացների անցկացման կամավորության սկզբունքը և այն դարձնել պարտադիր՝ ներգրավելով նաև բարձրաստիճան պաշտոնյաներին.

2) գենդերային հիմնախնդիրների ներկայացման, քարոզչական աշխատանքներ տանելու նպատակով Հանրային հեռուստատեսությամբ ՀԿ-ներին հատկացնել առանձին հեռուստաժամ.

3) պետական մարմինների ֆինանսական պատասխանատուներին վերապատրաստել գենդերային բյուջեի պլանավորման գծով.

4) ԵՄ-ի աջակցությամբ իրականացվող «Կանայք տեղական ժողովրդավարական գործընթացներում» եռամյա ծրագրի շրջանակներում իրականացնել առավել գործնական սեմինարներ:

Անդրադառնալով գենդերային ուսուցման գծով հատկացված գումարների նպատակային ծախսումների վերահսկողությանը՝ նշեց, որ վերահսկողություն չի իրականացվում: Ինչ վերաբերում է քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացների կազմակերպմանը, ապա ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ազգային ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան ունեն համապատասխան լիցենզիա, որպեսզի կազմակերպեն և անցկացնեն այդ դասընթացները: Ընդ որում, պարզ չէ նաև դասընթացի կազմակերպիչների լիցենզավորման պայմանները:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանին՝

1) ուսումնասիրել և հավաքագրել գենդերային ուսուցման գծով վերապատրաստման դասընթացների լիցենզավորման պայմանները, դասընթացների կազմակերպման մասին հաշվետվությունների ներկայացման հանգամանքը, վերապատրաստողների տվյալները և հաջորդ նիստին դրանց մասին ներկայացնել ամփոփ տեղեկանք.

2) Հայաստանի կանանց հանրապետական խորհրդի նախագահ Ա. Թովուզյանի գրավոր առաջարկությունների հիման վրա ներկայացնել համապատասխան նախագծեր:

5.2. Ձերբակալվածին պահելու վայրերում և կալանավայրերում կանանց խնդիրներն ուսումնասիրելու և առաջարկություններ ներկայացնելու նպատակով աշխատանքային խումբ ձևավորելու առաջարկություն

(Ա. Մնացականյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 5.2-րդ հարցը զեկուցեց ՀՕՄ-ի Երևանի գրասենյակի տնօրեն Ա. Մնացականյանը և նշեց, որ ներկայումս ձեռքարկվածին պահելու վայրերում և կալանավայրերում կանանց և անչափահասներին օտար անձանց ներկայությամբ հակառակ սեռի ոստիկանի կողմից իրականացվում է արտաքին զննում: Դրանից բացի՝ նախքան ձեռքարկվածի մեղքն ապացուցվելը վերջիններս տեղավորում են քրեակատարողական հիմնարկների կալանավորների հետ մեկ վայրում: Նման վայրերում չկան նաև բուժաշխատողներ, որի հետևանքով բուժզննումը ևս իրականացվում է ոչ պատշաճ եղանակներով: Ինչ վերաբերում է վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբին, ապա վերջինս կատարել է բավականին լուրջ վերլուծություն և ներկայացրել համապատասխան երկարաժամկետ և կարճաժամկետ առաջարկություններ: Կարճաժամկետ առաջարկներից է կին ոստիկանների ներգրավումը՝ ձեռքարկվածին պահելու վայրերում և կալանավայրերում կանանց և անչափահասների արտաքին զննության գործընթացում:

Ինչ վերաբերում է դիտորդական խմբի ներկայացրած երկարաժամկետ առաջարկներին՝ առաջարկեց ձևավորել աշխատանքային խումբ, որը կհարկանացնի համապատասխան վերլուծություն և դրա վրա հիմնված առաջարկություններ:

ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բաժնի պետ Կ. Սուլջանն առաջարկեց աշխատանքային խմբում ներգրավել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համապատասխան ներկայացուցչին:

Քննարկումներից հետո որոշվեց՝ ձևավորել աշխատանքային խումբ՝ ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ կառավարությանն առնչվող ՀՀ ոստիկանության, ՀՀ կառավարության աշխատակազմի, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, ՀՕՄ-ի Երևանի գրասենյակի և դիտորդական խմբի համապատասխան ներկայացուցիչների մասնակցությամբ:

5.3 Լոնդոնում կայացած գյուղատնտեսական մթերքների բարձր որակի համար մրցանակ ստանալու մասին

(Ռ. Ծառուկյան, Տ. Սարգսյան)

«Գ. Կ. Ծառուկյան» ՍՊԸ-ի տնօրեն Ռ. Ծառուկյանը տեղեկացրեց, որ 28 կազմակերպությունների կողմից գյուղատնտեսական մթերքների բարձր որակի մրցանակը՝ ոսկե

Թագը հանձնվել է Հայաստանի ներկայացուցչին՝ հանձինս իրեն: Մրցանակաբաշխությանը մասնակցում էին 80 երկրներ, որից կին ներկայացուցիչները 5-ն էին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ